

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈԶՋԱԹ ՆԻՔՆԱՖՍ

ԱՐԱՍԲԱՐԱՆ ՑԵՂԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԾԻՍԱԿԱՐԳԸ ԵՎ ՏՈՆԵՐԸ

Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ  
պատմական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2016

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ  
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ХОДЖАТ НИКНАФС

СЕМЕЙНЫЕ РИТУАЛЫ И ПРАЗДНИКИ ПЛЕМЕНИ  
АРАСБАРАН

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени  
кандидата исторических наук по  
специальности 07.00.04 "Этнография"

ԵՐԵՎԱՆ-2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և  
ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ պ.գ.թ., դոց. Վ.Ա. Առաքելովա  
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆ. Ռ.Ա. Նահապետյան  
պ.գ.թ. Թ.Բ. Ամրյան

Առաջատար կազմակերպություն՝ Մարդարապատի հերոսամարտի հուշահա-  
մալիք, հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության  
ազգային թանգարան:

Պաշտպանությունը կայանալու է 2016թ. հուլիսի 14-ին, ժ. 12:00-ին ՀՀ ԳԱԱ  
Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈՂ-ի 007  
Հնագիտության և ազգագրության մասնագիտական խորհրդում (հասցեն՝  
Երևան-0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և  
ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2016թ. հունիսի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար  
պատմական գիտությունների թեկնածու

Հ. Ա. Մելքոնյան

Тема диссертации утверждена на ученом совете Института археологии и  
этнографии Национальной академии наук Республики Армения

Научный руководитель; к.и.н., доц. В.А. Аракелова

Официальные оппоненты; д.и.н. проф. Р.А. Напетян

Ведущая организация: Мемориальный комплекс Сардарпатской битвы,  
национальный музей этнографии Армении и истории освободительной борьбы.

Защита состоится 14 июля 2016г. в 12:00 часов, на заседании специализи-  
рованного совета 007 ВАК по археологии и этнографии, при Институте  
археологии и этнографии НАН РА (адрес: Ереван-0025, ул Чаренца 15)

Автореферат разослан 14-го июня 2016г.

Ученый секретарь специализированного совета

к.и.н. У.А. Мелконян

## Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

**Թեմայի արդիականությունը:** Ատենախոսությունը նվիրված է արասբարան ցեղի տոներին և ծիսակատարություններին: Մույն աշխատությունում բացահայտվում են արասբարան ցեղի հոգեբանության, աշխարհընկալման, մշակութային առանձնահատկությունները, ինչպես նաև պետական և ազգային մտածելակերպը, որը կարող է արտահայտվել ինչպես գիտակցական, այնպես էլ ենթագիտակցական մակարդակներում: Արձանագրվում է, որ ընտանեկան ծիսակարգն ու տոներն ինչպես անհատական, այնպես էլ հասարակական երևույթներ են, որոնք արտահայտում են անհատի, ընտանիքի և առավել լայն իմաստով՝ երկրի պատմությունը, տվյալ ժողովրդի բազմադարյան ավանդույթներն ու ծեսերը: Ընտանեկան ծիսակարգին հետևելով և ընտանեկան տոները նշելով՝ անհատն իրականացրել է իր միասնությունը հարազատների և հասարակության հետ:

Տոներն ունեն կարևոր հանրային գործառույթ: Տոնը սինկրետիկ բնույթ ունի և այն պետք է դիտարկել տարբեր տեսանկյուններից՝ տնտեսական, կրոնական և այլն: Տոնն ավելի հարազատ է դարձնում մարդկանց անկախ ժամանակաշրջանից և անկախ նրանից, թե ո՞ր ժողովրդին են պատկանում այն կատարող մարդիկ:

Յուրաքանչյուր ցեղ կամ ազգ ունի ընտանեկան ծիսակարգի և տոների ուրույն համակարգ, սակայն հաշվի առնելով այն իրողությունը, որ ազգն՝ ինքը բազմաշերտ հասկացություն է, և էթնոլեզվական խմբերն ամբողջացնում են այդ հասկացությունը՝ ազգային տոներն ու ընտանեկան ծիսակարգային համակարգը նույնպես հարկավոր է շերտավորել: Ինչ վերաբերում է արասբարաններին, ապա նրանց հոգևոր-մշակութային կյանքը, որպես իրանական ազգի մշակութային համակարգի բաղկացուցիչ մաս, բոլոր ժամանակներում աչքի է ընկել իր հարստությամբ և բազմազանությամբ: Ըստ որում, նրանց ծիսակատարությունների բազմաթիվ տարբեր հուշում են այն մասին, որ դրանք, մեծամասամբ, հնից են զալիս և ունեն հեթանոսական կամ զրադաշտական ծագում:

Իրանական լեզուների բառագիտական վերլուծությունները, պատմագրական նյութերի ուսումնասիրությունն ու հնագիտական պեղումների արդյունքները ցույց են տալիս, որ հնագույն ժամանակներից քոչվոր անասնապահությունն արասբարան ցեղի համար եղել է կենսակերպ և գոյատևման միջոց: Արասբարան ցեղի բառապաշարը հարուստ և զարգացած անասնապահական եզրույթաբանություն ունի, որը հարստացնում է իրանական ժամանակակից լեզուների բառաֆոնդը: Ընտանի կենդանիների անվանումները վերաբերում են արասբարանների բառապաշարի ամենահին շերտին: Արասբարանների համար այնքան մեծ է եղել տնտեսական նշանակության կենդանիների տեղն ու դերը կենցաղում, որ հաճախ կենդանիների անվանումները նույնացվել են մարդկանց տրվող անվանումների հետ: Հետագայում XX դարում, երբ արասբարան ցեղի մեծ մասն անցել է

նստակեցության, և քոչվոր անասնապահության նշանակությունը նվազել է, քոչվորական կենցաղին բնորոշ շատ բառեր դուրս են եկել կիրառությունից:

***Հետազոտության նպատակն ու խնդիրները:*** Տվյալատենախոսության հիմնական նպատակն է բացահայտել և ներկայացնել արասբարան ցեղի տոները և ընտանեկան ծիսակարգը: Աշխարհագրական միջավայրով և քոչվոր անասնապահական կենսակերպով պայմանավորված արասբարանների տոների և ընտանեկան ծիսակարգի առանձնահատկությունները համեմատել իրանական մյուս ժողովուրդների սովորույթների և ավանդույթների համակարգերի հետ:

Թեմայի հիմնական խնդիրներն են հնարավորության սահմաններում համակողմանիորեն ուսումնասիրել արասբարան ցեղի պատմական անցյալը, որը հարուստ նյութ է տալիս նրանց սոցիալ-մշակութային կառուցվածքի, տոների ու ընտանեկան ծեսերի վերաբերյալ, թույլ է տալիս առավել ամբողջական պատկերացում կազմել դրանց մասին:

Սույն ուսումնասիրության համար անհրաժեշտ է քննարկել նաև իսլամական կրոնի շիայական դավանանքի դերն արասբարան ցեղի տոնակատարություններում և ընտանեկան ծիսական համակարգում:

***Աշխատանքի գիտական նորույթը:*** Ներկայացված ատենախոսության թեման «Արասբարան ցեղի ընտանեկան ծիսակարգը և տոները» առաջին անգամ է ներկայացվում որպես գիտահետազոտական մակարդակով կատարված համակողմանի ուսումնասիրություն: Մինչ այդ լույս տեսած աշխատություններում արասբարանների ընտանեկան ծեսերի ու տոների մասին հետազոտությունները իրականացավ են փոքր ծավալի գիտական հոդվածների և օտարալեզու գիտական աշխատությունների շրջանակներում՝ հատվածաբար: Տվյալ գիտական ուսումնասիրությունը ոչ միայն ազգագրական հետազոտության նշանակություն ունի, այլև կարևոր է սոցիոլոգիական և մշակութաբանական ուսումնասիրությունների համար: Այն կարող է օգտակար լինել իրանական ժողովուրդների ընտանեկան ծիսակարգին ու տոներին ծանոթանալու և այդ համատեքստում տարբեր համեմատություններ կատարելու տեսանկյունից:

Սույն թեման հետազոտելով՝ փորձել է արվել առաջին անգամ գիտահետազոտական պատշաճ մակարդակով քննության նյութ դարձնել արասբարան ցեղի ընտանեկան ծեսերն ու տոները՝ վեր հանելով և ընդգծելով դրանցում տեղ գտած կարևոր առանձնահատկությունները, ներկայացնելով սեփական դիտարկումները, մտքերն ու վերլուծությունները՝ տարաբնույթ խնդիրների վերաբերյալ:

***Ուսումնասիրության աղբյուրագիտական հիմքը:*** Արասբարան ցեղի բնակավայրի, կենսակերպի, ծեսերի ու տոների մասին ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել աղբյուրագիտական նյութերը, դաշտային հետազոտությունները և տարբեր հեղինակների ազգագրական և այլ բնույթի աշխատությունները, որոնցից են Բ. Էմանույլահիի «Քոչվոր ցեղերի կենսակերպն Իրանում», (Թեհրան, 1982թ), Մ. Էմանույլահիի «Իրանական

ցեղերն ու ժողովուրդները» (հատոր 1, Թեհրան, 2003թ.), Մ. Հաֆեզգադի (Արասբարանը պատմաառասպելական դիտանկյունից (հ. 1, Թավրիզ, 1996թ.), Փ. Անդրազիի «Ատրպատականի քոչվոր ցեղերի կենսակերպը» (Թեհրանում, 1982թ) և բազմաթիվ այլ հեղինակների աշխատություններ:

Մույն թեման ուսումնասիրելիս առանձնահատուկ կարևորություն ունեն նաև այն հետազոտողների աշխատությունները, որոնք նվիրված են Արասբարանի աշխարհագրական միջավայրի ուսումնասիրությանն ու նկարագրությանը: Դրանք կարևոր են այն առումով, որ աշխարհագրական միջավայրը իր անմիջական ազդեցությունն է թողնում սովյալ տարածքի բնակիչների ոչ միայն կենսակերպի, այլև տոների ու ծեսերի վրա, այսինքն՝ աշխարհագրական միջավայրի ուսումնասիրությամբ լավագույնս բացահայտվում են արասբարանների առավել լայն տարածում ունեցող տոների և ընտանեկան ծիսակարգի առանձնահատկությունները:

Հուդարկավորության ծեսն ամբողջապես արտահայտել է այս ցեղի աշխարհայացքն ու աշխարհընկալումը՝ պահպանելով իր մեծ դերն ու ազդեցությունը մարդկային կյանքի ու մահվան ընկալման, հոգեբանության ու մտածելակերպի վրա: Արասբարանում հուդարկավորության հնագույն սովորությունների մասին տեղեկությունները քիչ են, սակայն այնուամենայնիվ, պահպանվել են նյութական մշակույթի տարբեր ճյուղերում՝ ժայռապատկերներ, քանդակներ և իհարկե, առաջին հերթին առանձին գերեզմաններն ու հայտնաբերված բազմաթիվ դամբարանադաշտերը: Հարկ է նկատել, որ իրանցի սակավաթիվ հեղինակներ են հետազոտություններ իրականացրել այդ ուղղությամբ: Դրանցից են Հ. Բայբուրդին («Արասբարանի պատմությունը», Թեհրան, 1961), Խ. Բեհուզը («Արևելյան Ատրպատականի մշակութային ժառանգությունը, Թեհրան, 1990) և այլոք:

**Մշխատանքի կառուցվածքը և բովանդակությունը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից և աղյուսակներից:

### **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ներածության մեջ շարադրվել են ատենախոսության հիմնական դրույթները: Ներկայացվում է աշխատանքի նպատակը, ինդիքները, դրանց բացահայտումը, վերլուծությունը, թեմայի կարևորությունը, նրա արդիականությունը, գիտական նորույթը, պատմական աղբյուրները, թեմային առնչվող տարբեր ուսումնասիրություններ և ներկայում հավաքված ու գրի առնված նյութերը: Նշվում է, որ տոները և ծիսակատարությունները ուսումնասիրվում են տարբեր տեսանկյուններից:

### **ԳԼՈՒԽ ԱՈՒՋԻՆ**

#### **Արասբարան ցեղի պատմական նկարագիրն ու կենցաղավարման սոցիալ-մշակութային հիմքերը**

Առաջին գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից, որտեղ ներկայացվել է Արասբարանի աշխարհագրական դիրքը, տեղանվան ծագումը, բնակլիմայական պայմանները, արասբարան ցեղի նախապատմությունը, ու

ցեղային սկզբունքների վրա հիմնված սովորույթամշակութային կենսակերպը, ինչպես նաև էթնոլեզվական և կրոնական նկարագիրը:

Արասբարան ցեղն Իրանի խոշոր ցեղերից մեկն է, որի բնակության աշխարհագրությունն ընդգրկում է երկրի հյուսիսարևմտյան հատվածը՝ գերազանցապես Արևելյան Ատրպատական նահանգի Քալիբար (Կենտրոնական, Աբեշահմադ և Խոդաաֆարին շրջաններով), Ահար (Կենտրոնական և Հուրանդ շրջաններով) և Վարզաղան (Կենտրոնական և Խարվանա շրջաններով) շահրեսթանները, Արաքս գետի հարավային շրջանները՝ Խոդաաֆարինից մինչև Ալանդուգ:

Արասբարանի բարձրադիր գոտիները ձմռանը մշտապես ծածկված են լինում հաստ ձյունածածկույթով, որը պարբերական տեղումների հետ մեկտեղ նպաստավոր պայմաններ է ստեղծում գետերի առաջացման համար: Գետերի ու գետակների ճնշող մեծամասնությունը թափվում է Արաքս գետը, միայն Արասբարանի հարավային շրջանների որոշ գետեր այլ ուղղություն ունեն:

Արաքսը Արասբարանի համար կենսական նշանակություն ունեցող գետ է: Այն ունի 1072 կմ երկարություն, որի մեծ մասն անցնում է Իրանի սահմանով: Տարածաշրջանի գետերի հիմնական մասը հանդիսանում են Արաքսի վտակները:

Անհիշելի ժամանակներից ի վեր արասբարան ցեղի ներկայացուցիչները զբաղվել են քոչվոր անասնապահությամբ, սակայն հավաստի տեղեկություններ չկան, թե քոչվոր կենսակերպը որ ժամանակներից է դարձել դոմինանտ արասբարանների համար: Արաբների՝ Իրան ներխուժելուց հետո հաջորդական կարգով երկիր են ներթափանցել Միջին Ասիայից թուրք օղուզները, այնուհետև մոնղոլները, որոնք ծանր հարկեր են սահմանել իրանցիների համար: Այդ իրողությունը որոշակի բարդ իրավիճակի մեջ է դրել Իրանի նստակյաց բնակչությանը, որի զգալի հատվածը նախընտրել է հեռանալ լեռները՝ քոչվոր անասնապահության նպատակով: Փաստորեն, այդ շրջանում վերականգնվել է Մասանյանների օրոք փոքրիշատե մոռացության մատնված քոչվոր կենսակերպը:

«Արասբարան» տեղանունն ունի համեմատաբար նոր պատմություն. նրա ծագումը վերագրվում է Փեհլիների դինաստիայի իշխանության գալու ժամանակաշրջանին, այսինքն՝ XX դարի առաջին կեսին: Մինչ այդ, սկսած մոնղոլական տիրապետության շրջանից, հիշյալ բնակավայրը հայտնի է եղել որպես «Ղարեդադ» կամ «Ղարադադ», որը թյուրքական ծագման բառ է և, ինչպես նշում է Հասանբեյգին, ազդվել է նրանից հյուսիս ընկած «Ղարեբադ» կամ «Ղարաբադ» բնակավայրի անվանումից: Ավելի վաղ ժամանակաշրջանում հայտնի չէ, թե «Արասբարանը» ինչպես է կոչվել, համենայն դեպս նախքան XIII-XIV դարերը:

Սելջուկյան տիրապետությունն Իրանում որոշակի ազդեցություն է թողել իրանական տարբեր ցեղերի, այդ թվում՝ արասբարանների կենցաղի, մտածելակերպի և կենսակերպի վրա: Պահպանելով քոչվոր կենսակերպը, արասբարանները թյուրք սելջուկներից վերցրել են մի շարք ընտանեկան

ավանդույթներ և տոներ, որոնք պահպանվել են նաև հետագա դարերում: Ի տարբերություն քրդերի և արաբների, ավելի շատ ընդհանրություններ կարելի է գտնել իրանական և թյուրքական քոչվոր ցեղերի ապրելակերպում: Թյուրք սելջուկների արշավանքներին հաջորդել են մոնղոլական արշավանքները, որոնք ավերիչ և քայքայիչ են եղել Իրանի համար: Թյուրք-մոնղոլական մրցակցության մեջ հաղթող է դուրս եկել թյուրքական տարրը: Արդյունքում, մոնղոլներն ընդունել են թյուրքական ցեղակրոնային ավանդույթներն ու տարրալուծվել են Իրանի հյուսիսարևմտյան նահանգներում հիմնավորապես հաստատված թյուրքական ծագում ունեցող ցեղերի մեջ: Տարրալուծման գործընթացն է՛լ ավելի ինտենսիվորեն է շարունակվել Թեյմուրյանների կառավարման ժամանակահատվածում, երբ սկսվել է թյուրքական ազդեցության տարածման երկրորդ ալիքը: XIII դարավերջին Թյուրքմենստանից Իրանի Ատրպատական են ներթափանցել թյուրքական ակ-կոյունլու և կարա-կոյունլու ցեղերը, որոնց թիրախն էին Փոքր Ասիան և Անդրկովկասը, որտեղ և ի վերջո հաստատվեցին, սակայն նրանց կործանիչ արշավանքների հետևանքով Ատրպատականը ստացավ թյուրքական ազդեցության հերթական չափաբաժինը:

Առկա են պատմական վկայություններ, որ արասբարանների գերակշիռ մասը Մեֆյանների օրոք զբաղվել է քոչվոր անասնապահությամբ. դրան մեծապես խթանել է այն իրողությունը, որ Մեֆյան ժամանակաշրջանում նույնպես չեն դադարել թյուրքական տարբեր ցեղերի ներխուժումներն Իրանի հյուսիսարևմտյան նահանգներ, որոնք ներթափանցել են Փոքր Ասիայից, Սիրիայից և Հայաստանից: Այս հանգամանքը մշտապես սպառնալիք է հանդիսացել նստակյաց բնակչության համար, որն ապահովության նկատառումներով նախընտրել է նստակեցությունը փոխարինել քոչվոր կենսակերպով:

Մեֆյան արքայատոհմի ներկայացուցիչ Շահ Աբասի գահակալության ժամանակահատվածում (1571-1629թթ.) արասբարաններն առավել հայտնի են եղել «շահսեվան» ընդհանուր անվանումով, որը թյուրքական ծագման բառ է և նշանակում է՝ «շահին բարեկամ»: Դա պատիվ է եղել արասբարանների համար և արդյունքն այն փաստի, որ նրանք պաշտպանել են շահին՝ երկրի ներսում ապստամբությունները ճնշելու գործում: Նրանք մեծ ծառայություններ են մատուցել շահին պետության սահմաններն անվտանգ պահելու հարցում և հաճախ հասել նաև զինվորական բարձր կոչումների: Ֆաթալի շահի օրոք (1797-1834թթ.) արասբարանների վեց ցեղային խմբավորում կար՝ չալբիանլու, հաջալիլու, մոհամադիսանլու, դարեչուրլու, հոսեյնաքլու և դաշգորուս, որոնք առանձին ինքնանվանումներով հանդերձ՝ նաև հայտնի են եղել «դարեդադ» ընդհանուր անվանումով: Արասբարանները բախտիարի, դաշդայի և շահսեվան ցեղերի կողքին համարվում են իրանական խոշորագույն ցեղերից մեկը:

Իրանական լեզվագիտական վերլուծությունները, պատմագրական ուսումնասիրություններն ու հնագիտական պեղումների արդյունքները ցույց են տալիս, որ հնագույն ժամանակներից քոչվոր անասնապահությունն

արասբարան ցեղի համար եղել է հիմնական զբաղմունք, կենսակերպ և գոյատևման միջոց:

Լեզուն՝ թյուրքերենը Ատրպատականում, այդ թվում Արասբարանում, արմատավորվել է միայն վերջին դարերի ընթացքում Սեֆյան արքայատոհմի ժամանակաշրջանից: Այժմ թյուրքերենը, սակայն, սահմանափակվում է ներընտանեկան և առօրյա խոսակցական շփման ոլորտներով: Պաշտոնական գրագրության, ելույթների, գիտության ու կրթության լեզուն մնում է պարսկերենը, որի դիրքերը՝ դատելով գործընթացներից, օրեցօր ամրապնդվում են: Արասբարանի խոսակցական թյուրքերենը գտնվում է պարսկերենի նշանակալի ազդեցության տակ: Այն կարելի է համարել նույնիսկ այդ երկուսի խաչասերման արդյունքում ստեղծված լեզու:

Արասբարանները դավանում են «տասներկուիմամական շիայականություն»: Սեֆյան դինաստիայի ժամանակաշրջանն ուսումնասիրող պատմաբան Փարհամն իրավացիորեն ասել է. «Միակ բանը, որ կարողացավ համախմբել Իրանի հյուսիսարևմտյան ցեղերին, կրոնական՝ շիայականության գործոնն էր: Տարբեր լեզուներով խոսող և մշակութային տարբեր հատկանիշներ ունեցող հանրույթների համար կրոնն իսկապես դարձավ միավորող իրողություն»:

Արասբարանների ժողովրդագրական պատկերը և կենսակերպը ներկայացնելիս հարկավոր է նշել, որ նրանք գերազանցապես առաջնորդվում են միգրացիայի հորիզոնական սկզբունքով, թեև որոշ դեպքերում նկատելի են նաև ուղղաձիգ միգրացիայի երևույթներ: Ըստ քոչվորական կենսակերպ ունեցող ցեղերի ներկայացուցիչների տների կամ վրանների քանակի, ինչպես նաև տեղաշարժման տարածական և ժամանակային հատկանիշների, արասբարաններին բնորոշ են միգրացիայի փոքր, միջին և մեծ տեսակները. չալբիանլու ցեղախմբին առավելապես բնորոշ են միգրացիայի փոքր և միջին ձևերը (փոքր միգրացիա է կոչվում այն տեղաշարժը, երբ 18 կմ երկարություն ունեցող տարածության վրա լինում է 1-3 տուն), իսկ հաջալիլու ցեղախմբին հատուկ է մեծ միգրացիան: Վերջիններիս աշիրթիների մեծ մասը տեղակայվում է 200 կմ ձգվող տարածության վրա՝ տների և վրանների խիտ դասավորությամբ: Հոսեյնաքլու, դարեչորլու խմբավորումներին և մոհամադխանլու ցեղախմբի որոշակի հատվածին բնորոշ է առավելապես փոքր միգրացիայի տեսակը: Արասբարանների շուրջ 91.6%-ը նախընտրում է տեղաշարժման ժամանակ օգտագործել ավտոմեքենա՝ որպես մարդկանց և բեռների փոխադրման միջոց:

Հատկանշական է, որ արասբարան ցեղի ներկայացուցիչների հաշվառման ընթացքում բնակչության թվաքանակի իրական պատկերն արձանագրված ցուցանիշներից էապես տարբերվել է: Քանի որ տարվա տարբեր ժամանակահատվածներում քոչվոր անասնապահությամբ զբաղվող արասբարանները գտնվել են տեղափոխությունների ընթացքում, վիճակագիրներն ստիպված են եղել տվյալ պահին բացակայող անձանց արձանագրել նրանց բնակարանների թվաքանակով և դա, անշուշտ, չէր կարող տալ ճշգրիտ պատկեր, և արդյունքում իրականից անհամեմատ սակավաթիվ է



ներկայացվել բնակչության քանակը: Համենայն դեպս, ըստ 1998թ. մարդահամարի տվյալների, Արասբարանում, ընդհանուր առմամբ, հաշվվել է շուրջ 7233 ընտանիք, որից 3692-ը՝ չալբիանլու ցեղախմբից, ավելի քան 15%-ն իրեն որևէ ցեղախմբի անդամ չի համարել, 115 ընտանիք դաշգորուսից (վերջին ցուցանիշում ընտանիքների շուրջ 1.6%-ը չի վարել քոչվոր անասնապահական կյանք, դրանք նստակյաց հարուստ գյուղացիներն են եղել): Համեմատելով արասբարանների վերաբերյալ տարբեր տարեթվերի ցուցանիշները, կարելի է նկատել, որ գործ ունենք բնակչության թվի փոփոխությամբ պայմանավորված բնակչության աճի հետ, որը տեղի է ունենում բնական ձևով՝ ծննդյան և մահվան հետևանքով

## ԳԼՈՒԽ II

### Արասբարան ցեղի տոներն ու ամուսնության արարողակարգը

*Ռուզ-ե բաչչեհա* մանուկների տոնը նվիրված է երեխաներին: Այն նշվում է ապրիլ ամսվա կեսերին: Տոնի առթիվ արասբարաններն իրենց աղջիկ երեխաներին աղջիկ տիկնիկներ, իսկ տղա երեխաներին տղա տիկնիկներ են նվիրում, որն ունի խորհրդանշական նշանակություն: Տիկնիկները երեխաներին կյանքում իրենց «կոչմանը» ծանոթացնելու խորհուրդ են պարունակում, այն, որ աղջիկն ու տղան չպետք է երբեք իրենց դերերը շփոթեն: Երեխաներին խստորեն արգելվում է տիկնիկներ փոխանակելը, քանի որ դա համարվում է «վատ նշան»:

*Էյդ-ե Ղորբան* զոհաբերության տոնը դեռևս Սեֆյան ժամանակաշրջանից է Արասբարանում սկզբնավորվել և ստացել ընտանեկան ծեսի նշանակություն: *Էյդ-ե Ղորբան*-ի (կոչվում է նաև «Էսմայիլ-ե Ղորբանի») խորհուրդը մատաղն է, որի ժամանակ զոհաբերված կենդանին՝ հիմնականում գառը, որպես ողորմություն մատուցվում է մուրացկաններին և ընչազուրկներին: Այս տոնը կատարվում է մուսուլմանական լուսնային տարվա 12-րդ ամսի 10-րդ օրը: Սա արասբարանների ամենասիրելի տոներից մեկն է, քանի որ մատաղն իրականացվում է աստծուց ներում, ապաշխարհություն, բարեբախտություն, առողջություն խնդրելու կամ շնորհակալություն հայտնելու համար: Ցեղի անդամները երեկոյան՝ նախքան մայրամուտը, սովորաբար հավաքվում են ավագ սերնդի ներկայացուցիչների տանը, աղոթք ասում և ուտում հատուկ այդ երեկոյի համար պատրաստած մատաղի միսը: Զոհաբերվող կենդանին պետք է արու լինի: Այդ օրը վաղ առավոտյան մարդիկ գյուղերից կամ յայլաղներից գնում են ամենամոտ մզկիթը կամ մատուռն՝ աղոթելու: Օրվա ընթացքում կանայք վանում են մազերը, որպեսզի մաքրվելով, մեղքերից ազատավեն: Ընդհանրապես, «Էյդ-ե Ղորբանի» օրվա ջուրը համարվում է սուրբ և հրաշագործ, հետևաբար ջրի նկատմամբ հատուկ վերաբերմունք է դրսևորվում և անտեղի ջուր չի թափվում: Ավանդույթի համաձայն՝ «Էյդ-ե Ղորբանի» օրը նշանված տղայի հարսնացուի ընտանիքին գառ են նվիրաբերում: Դա ունի միմյանց հարազատանալու, խնամխանալու և ապագա զույգի օրհնության խորհուրդ: Այդ գառը սովորաբար հինայում են,

գարդարում են կարմիր և այլ գույների կտրոներով, թանկարժեք շալ են վզին փաթաթում, ճակատին հայելի են ամրացնում և այդպես ուղարկում ապագա հարսի տուն: Վերջինիս մայրը կամ հայրը գառը բերողին փող կամ որևէ արժեքավոր իր է տալիս՝ ի նշան երախտագիտության: Եթե այդ արարողակարգը «էյդ-ե Ղորբանի» օրը որևէ պատճառով տեղի չի ունենում, ապա դա վկայում է այն մասին, որ առաջիկայում ամուսնությունը չի կայանալու և գույզի՝ ընտանիք կազմելու ծրագրերը փոխվել են:

### *Չահարշանբե սուրի*

Ինչպես իրանական մյուս ժողովուրդներն ու ցեղերը, այնպես էլ արաբարաններն, առանձնահատուկ շուքով են նշում տարվա կարևորագույն տոներից մեկը համարվող Չահարշանբե սուրին: Այն իրանական օրացույցով տարվա ամենավերջին չորեքշաբթի օրն է կատարվում (համընկնում է քրիստոնեական տոմարով մարտի 21-ին կամ գարնանային օրավասարին նախորդող չորեքշաբթիվա հետ): Տոնի անվանումը ծագում է պարսկերեն «չահարշանբե», այսինքն՝ «չորեքշաբթի» և «սուր»՝ «խնջույք» բառերից:

Չահարշանբե սուրին ունենալով հեթանոսական արմատներ, մեծ ժողովրդականություն է վայելում հասարակության մեջ: Իրանում Իսլամական հեղափոխությունից հետո բարդություն առաջացավ այս տոնը նշելու կապակցությամբ, քանի որ համարվում էր, որ այդ տոնը հակասում է իսլամական սկզբունքներին: Այդուհանդերձ, գիտակցելով, որ դժվար է ժողովրդի մեջից արմատախիլ անել դարերով արմատացած ավանդույթները, Իրանի հոգևոր-քաղաքական վերնախավը հարմարեցրեց այն շիայականության կրոնական գաղափարախոսությանը և պաշտոնապես այն ճանաչեց որպես ազգային-ընտանեկան տոն: Արաբարանները Չահարշանբե սուրին նախօրոք են պատրաստվում: Ողջ օրը նրանք բնության գրկում են անցկացնում՝ հիմնականում գետի ափին: Ոչխար են մորթում, ուրախ խաղեր կազմակերպում, զվարճանում: Այդ օրը չի կարելի տանը մնալ: Տոնը երբեմն նշվում է նաև հեռավոր ուխտագնացություններով: Մարդիկ ուտելիքի երկօրյա պաշարով այցելում են սրբավայրերը՝ իրենց հետ տանելով զոհաբերվելիք կենդանուն: Չահարշանբե սուրին ընտանիքի անդամներին և նույնիսկ ամբողջ ազգատոհմը միավորելու, համախմբելու, հավաքելու խորհուրդ ունի, և այդ օրը սովորաբար հայրենի գյուղ, ծնողների տուն են վերադառնում հեռավոր քաղաքներում ապրող զավակներն ու հարազատները: Մթնշաղին բոլորը ետ են գնում իրենց բնակավայրերը և իրենց տների մոտ խարույկ վառում, որը պետք է մինչև կեսգիշեր չհանգչի:

Շիայական ավանդույթը որոշ փոփոխություններ մտցրեց տոնակատարության բաղադրիչներում. հայտարարվեց, որ տների կտուրներին վառվող կրակը խորհրդանշում է իսլամական Մուհամեդ մարգարեի ժայռի վրայից Բուրակին հեծած երկինք համբարձվելը, և Բուրակի սմբակներից վառ լույս կամ կրակ երևալը: Ըստ ավանդույթի՝ այդ կրակը վառվել է այն բանից հետո, երբ Բուրակը աջնի ոտքերի սմբակներով խփել է ժայռին՝ օդ բարձրանալու նպատակով:

Կտուրից բացի, իրանցիները բալում կամ փողոցում նույնպես կրակ են վառում, որպեսզի շուրջը հավաքվեն, վրայից թռչեն, մտքում կամ բարձրաձայն բարենախոսներ արտասանեն գալիք տարվա համար: Իրանական ժողովուրդների հավատալիքներում «ամենակարող» կրակն այրվելով, իր հետ տանում է բոլոր հիվանդություններն ու ձախողությունները: Չահարջանքե սուրիի օրը կրակի վրայով թռչելիս նրանք նաև խնդրում են կրակից (դա նույնն է, թե խնդրեն արեգակից), որ այն «լինի արդար» և «թույլ տա» մեկընդմեջ անձրևել: Չահարջանքե սուրիի խարույկը նաև զարնան ավետման և բնության զարթոնքի խորհրդանիշն է: Այն արասբարանների մոտ, ինչպես և հայերի «Տեառնընդառաջ» տոնի ժամանակ, կապվում է բերքատվության, պտղաբերության և առատության հետ: Հաճախ խարույկի մոխիրը թափում են տան շեմքին, չորս անկյուններում, որպեսզի օջախում հաջողություն ու երջանկություն լինի և ձեռնարկված գործերը «բարաքյաթ» ունենան: Մոխիրը նաև լցնում են մարագները, կճուճների վրա, որ դրանք միշտ առատ լինեն, գոմերը՝ որպեսզի կովերը կաթնատու լինեն, հավաբները՝ որպեսզի հավերը ձվատու լինեն: Մոխիրը նաև շաղ են տալիս այգիներում, արտերում, տանում-թաղում են հողի մեջ, որպեսզի ծառերը պտղատու լինեն: Չահարջանքե սուրիի խարույկն ունի նաև կանանց անպտղությունը բուժելու հատկություն: Կրակի վրայով թռչելիս անզավակ կանայք այդ կրակով խանձում են իրենց զգեստի փոքրիկ մասը՝ ակնկալելով պտղաբերություն: Այս օրը նաև գուշակություն են կատարում. հատուկ կարկանդակն էր են թխում և մեկի մեջ որևէ փոքրիկ իր են դնում: Ում բաժին է ընկնում այդ կարկանդակը, համարում են, որ գալիք տարին հենց նրա տարին է լինելու: Այդ կարկանդակը կոչվում է «երջանկության կարկանդակ»: Հայերի հավատալիքներում նման երևույթ էր «Տարի» կոչվող հացը: Ծիսկան հացերն ամբողջապես նվիրված էին նոր տարվա հաջողություններին:

*Նոուռուզ* Նոուռուզը, որը քրիստոնեական տարեթվով սովորաբար նշվում է մարտի 21-ին (պրսկ. نوروز — «նոր օր») իրանական ժողովուրդների համար տարվա կարևորագույն օրերից մեկն է, արևային օրացույցով Նոր տարին է և զարնանային օրահավասարը: Այդ տոնը նշելն ազգային ավանդույթ է, որն անմիջական կապ չունի իսլամական սովորույթի հետ: Այն, բացի Իրանից, նշում են Ադրբեջանում, Աֆղանստանում, Պակիստանում, Հնդկաստանի որոշ շրջաններում, ինչպես նաև քրդերը: Նոուռուզի ծագումն ունի հին արմատներ: Այն, որպես տոն, պաշտոնապես սկսել են նշել Աքեմենյան աշխարհակալության ժամանակաշրջանից՝ իբրև զրադաշտական տոն, որը շարունակել է նշվել նաև արաբական արշավանքներից հետո՝ մինչև մեր օրերը: Հատկանշական է, որ Արասբարանում առավել ընդունված սովորույթներից է Նոուռուզի օրը ձու ներկելը և ձվակոխիվ խաղալը, որտեղ հաղթողն իրավունք է ստանում տանտիրուհուց պահանջել և ստանալ այն ուտեստը, որն ինքն է այդ պահին ցանկանում: Վերջինս չպետք է մերժի հաղթողի ցանկությունը: Եթե սարքած ուտեստը հավանության է արժանանում ձվակոխում հաղթողի կողմից, ապա ամեն ինչ այդքանով ավարտվում է, իսկ

էթէ ոչ, ուրեմն տանտիրուհին պետք է այնքան ձու ուտի, որքան երեխա ունի: Երբեմն դժվար է լինում մեծ թվով հավկիթներու տեղը, քանի որ արասբարանների շրջանում քիչ չեն բազմազավակ ընտանիքները: Հավանաբար այս ավանդույթը դրսից է ներմուծվել, քանի որ պատմական աղբյուրներում ձվակովի և տանտիրուհու ձու ուտելու վերաբերյալ հիշատակություններ չկան: Հայերը պարտադիր կարգով ձու էին կարմիր ներկում Զատիկի առթիվ և ձվախաղերը, որ երկար ժամանակ զբաղեցնում էին երիտասարդության ու պատանեկության երկու սեռին, ամբողջապես արտահայտում էին պտղաբերությունն ու զարթոնքը: Արասբարանի բնակիչները Նոռուռուզի օրերին գունագեղ հագուստներ են կրում. գերիշխում են սպիտակ, վարդագույն, մանուշակագույն և կարմիր գույները: Այս գույներն են գերիշխում նաև տան կահավորանքի, սպասքեղենի մեջ, որոնք տոնական տեսք են տալիս ընտանեկան միջավայրին: Արասբարանների մեջ ընդունված է այդ օրերին նոր հագուստ կրել: Նոռուռուզի գիշերն ընդունված է բաց թողնել տան դռներն ու պատուհանները, որպեսզի դուրս գան անցնող տարվա բացասական երևույթներն օջախներից և փոխարենը թարմ օդի հետ միասին դրական լիցքեր, նոր ձեռքերումներ և հաջողություն մտնի տուն: Այդ օրը սեղանին անպայման մի բաժակ մաքուր ջուր է դրվում: Այն խորհրդանշում է մարդկանց սրտերի և հոգիների մաքրությունը, մարդկանց անկեղծությունը, ազնվությունը, արժանապատվությունն ու պատվախնդրությունը: Նոռուռուզը գրադաշտական տոն է, որի հիմքերը, ըստ ավանդության, դրել է անձամբ Զրադաշտը: Նա այս տոնը զուգադիպեցրել է գարնանային օրահավասարին, հավանաբար օգտագործելով նախկինում նշվող գարնան գալուստը, որը նա ձոնել էր Աշա-Վահիշտային և կրակին: Նոռուռուզի մասին առաջին գրավոր տեղեկությունները հնագույն արձանագրություններում հայտնվել են II դ. Պարսկաստանում: Աքեմենյանների օրոք (մ.թ.ա. 550-330) Նոռուռուզի օրը Պարսկական կայսրության տիրապետության տակ գտնվող տարբեր ազգերի թագավորները արժեքավոր նվերներ են բերել կայսրին՝ *արքայից արքա* (Շահանշահ): Արասբարանները, կարծես, պահպանել են Աքեմենյան շրջանից եկած այն ավանդույթը, երբ Նոռուռուզի օրը տոհմի ավագանուն և մեծամեծերին նվերներ են տալիս: Նոռուզի ծիսական սեղանին («Հաֆթ սին») դրվում է «ս» տառով սկսվող յոթ տեսակի ուտեստ՝ նորածիլ, թարմ կանաչին (սաբզե), ածիկը (սամանու), փշատը (սենջեղ), սխտորը (սիր), խնձորը (սիր), սումախը (սումաղ), և քացախը (սերքե): Բացի այդ, ընդունված է սփռոցին դնել հայելին, ակվարիումով կենդանի ձկները, սմբուլը (հիացինտ), ներկած հավկիթները, մետաղադրամները, Ֆիրդուսու «Շահնամեն», Հաֆեզի «Դիվանը», Ղուրան կամ Ավեստայի գրքերից որևէ մեկը, քաղցրավենիք և այլն:

Արասբարանում գոյություն ունի նաև Հաջի Ֆիրուզի՝ ձմեռ պապիկի ավանդույթը, որը տարբերվում է ողջ աշխարհում տարածված ձմեռ պապիկի կերպարից: Հաջի Ֆիրուզի դերում հանդես եկողը սևացնում է երեսն ու ձեռքերը, կարմիր հագուստ ու գլխարկ է հագնում,

փողոցներում դափ կամ դափիք է ման ածում, երգում է, արտասանում, պարում՝ մարդկանց իր հետ երգեցնելով և ծիծաղեցնելով: Նա նվերներ չի բաշխում երեխաներին, այլ առավելապես ծաղրածուի դեր է կատարում:

*Յալդա* «Իրանական աշխարհում», ինչպես և Արասբարանում այս տոնը նշվում է ձմռան ամենաառաջին օրը (իրանական տոմարով), քրիստոնեական օրացույցով՝ դեկտեմբերի 21-ին: Յալդայի ակունքները գալիս են հեթանոսական շրջանից և կապված են լուսի ու մաքրության Միհր աստվածության հետ: Ըստ ավանդության՝ Միհրը ծնվել է Յալդայի գիշերը: Արեգակը (ինքը՝ Միհրը) ծնվելով այդ գիշեր, ձմռան առաջիկա երեք ամիսների ընթացքում դեռևս մանուկ է լինում, իսկ գարնան բացվելուն պես հասունանում է և սկսում է ջերմացնել երկիրը: Յալդան իրանական ազգային, ընտանեկան տոն է, որի ծիսական հիմքում ընկած է ուրախությունը, լուսավոր ապագայի նկատմամբ հավատն ու հույսը: Արասբարանները, հնից եկած ավանդույթի համաձայն, Յալդայի գիշերը մեծ խարույկ են վառում: Այն խորհրդանշում է արեգակն ու ջերմությունը, որը պետք է վախեցնի խավարն ու ցուրտը մարմնավորող չար ուժերին: Կրակը վառելուց հետո մարդիկ հավաքվում են խնջույքի: Սեղանի շուրջը հավաքվածները, միմյանց բարեմաղթանքներ են ուղղում: Հնում դրանք կենացների տեսքով էին կատարվում, իսկ այժմ, իսլամական սկզբունքների համաձայն, գինին փոխարինվում է հյութերով: Յալդայի տոնակատարության ժամանակ հյուր գնացող անձը չպետք է հյուրընկալող օջախը մտնի ձախ ոտքով: Դա անհաջողություն է բերում: Եվ եթե հյուրը սխալմամբ ձախ ոտքով է մտնում տուն, ապա տանտերը բերում է Դուրանը, որը հյուրը երեք անգամ համբուրում է և գլխին դնում, այնուհետև դուրս է գալիս ու նորից տուն մտնում՝ այս անգամ աջ ոտքով: Այդպիսով համարվում է, որ «նաֆսը» չեզոքացվել է: Յալդան քրիստոնեական ավանդույթում Հիսուսի ծնունդն է՝ Սուրբ ծնունդը, որն ուղղափառ քրիստոնյաները նշում են հունվարի 6-ին:

***Ամուսնության ծիսակարգը***

Ամուսնության ավանդույթն արասբարանների ցեղակլանային մշակույթի կարևոր բաղադրիչներից է, որը մերժելը, այսինքն՝ չամուսնանալը ցեղակիցների կողմից անընդունելի երևույթ է: Հատկապես չափահաս տղամարդու հրաժարվելն ամուսնությունից դիտվում է որպես թուլակամություն, անպատասխանատվություն և մեծագույն մեղք: Արական սեռի ներկայացուցիչների դեպքում ամուսնության տարիքը միջինում 16-18-ն է, իսկ իգական սեռի համար՝ 14-16-ը:

Արասբարանների սովորույթներում հաճախ միմյանց հետ են ամուսնանում զարմիկ զարմուխիները. սա բավական տարածված երևույթ է: Մակայն այն ավելի սակավ է տեղի ունենում այն շրջաններում, որտեղ ասբարանները շփումներ ունեն նեստորականության հետևորդ ասորիների հետ: Օրինակ՝ Ուրմիայի շրջանում, որտեղ երիտասարդները երբեմն մերժում են մերձավոր հարազատների միջև ամուսնության գաղափարը (հորեղբորորդի, մորաքրոջ և հորաքրոջ որդի, դուստր և այլն): Խնդիրն այն է, որ նեստորական եկեղեցին երբևէ չի խրախուսել նման ամուսնությունները: Ուրմիայի

ասորիների ամուսնությունն բաղկացած է երեք փուլից՝ խնամախոսություն (brata rdaya), նշանադրություն (talabuta) և հարսանիք (khlouyla): Արասբարանների մոտ խնամախոսության արարողությունը, փաստորեն, նույնացվում է նշանադրության հետ, որի համար առանձին արարողություն տեղի չի ունենում: Ասորիների ազդեցությամբ է բացատրվում նաև սրբավայրերում և այլ տեղերում երիտասաղների հանդիպման արդյունքում կազմվող ընտանիքների փաստը:

Տղայի ընտանիքը այժմ *բաշլիդ* է տալիս այն, ինչ ցանկանում է և տալիս է այնքան, որքան ցանկանում է: Հարսը առաջին անգամ իր ամուսնու ընտանիք է գնում օժիտով, որը սովորաբար բաղկացած է լինում կենցաղային իրերից՝ գորգից, մահճակալից, կենդանիների (հիմնականում ոչխարի) որոշակի գլխաքանակից, ձեռքի գործվածքներից, որոնք գործել է անձամբ ինքը՝ հարսը, նախքան ամուսնությունը: Հարսանեկան խնջույքի օրը, առավոտյան կամ կեսօրին, երկու կողմի կանայք և աղջիկները գալիս են հարսի տուն, լողացնում են նրան և մազերը հինայում: Ամենավերջում կանայք նաև հինայում էին հարսի ոտքերը, որը խորհրդանշել է նրա բարոյական մաքրությունը և փեսայի տուն «մաքուր» ոտք դնելը: Այժմ, սակայն միայն ձեռքերն են հինայում: Այդ օրը նաև փեսային են լողացնում: Ե՛վ հարսին և՛ փեսային բաղնիք ուղեկցելու արարողությանը նախորդում է լողացնելու նպատակով ժամանած հյուրերի՝ նվերների հանձնման արարողությունը, որն անցնում է ուրախ մթնոլորտում: Ծիսական արարողությամբ են կապում հարսի գոտին փեսայի տուն գնալու ժամանակ: Գոտին, որպես կանոն, կապում է փեսայի եղբայրը. եթե փեսան եղբայր չի ունենում, ապա նրա արական սեռի հարազատներից որևէ մեկը: Հարսի գոտին կապող անձը կոչվում է «ղայեն»: Գոտին կապելու ընթացքում երկու կողմի կանայք և աղջիկները միասին երգում են՝ գովերգելով նորահարսին և նրան մաղթում են, որպեսզի նա յոթ տղա և մեկ աղջիկ ունենա:

Ըստ ավանդույթի՝ հարսին հայրական տնից ամուսնու օջախ են տեղափոխում փեսայի կողմի ամուսնացած, փորձառու կանայք, որոնք հարսանեկան խնջույքի ընթացքում նորահարսին նոր զգեստներ են նվիրում: Այժմ, սակայն, բացի զգեստներից, այլ նվերներ էլ են տալիս են, օրինակ՝ ոսկյա, արծաթյա զարդեր և այլն: Եթե հարսանիքը ունենում ամռանը՝ յայլադում, հիմնական ծախսերը հոգում է տղայի կողմը, որը պարտավորվում է հրավիրել ոչ միայն իրենց կողմի հարազատությանը, այլև այլ աշխրեթների մեծամեծերին և այլ ցեղերի անվանի մարդկանց: Վերջիններս մեկ կամ մի քանի ուղտի կամ ձիու վրա իրենց հետ, որպես նվեր, բերում են մի մեծ կտոր շաքար, որը խորհրդանշում է գույզի ապագա քաղցր կյանքը և նվերները՝ դրամական գումարի տեսքով, թանկարժեք զարդերի, սպիտակեղենի, սպասքի և այլն: Ամենաթանկ նվերը, սակայն, կենդանիների որոշակի գլխաքանակն ու շքեղ գորգերն են:

Արասբարանների մոտ ամուսնավորություն, գրեթե չի լինում, իսկ եթե տեղի ունենա, կպախարակվի ցեղակիցների կողմից:

## ԳԼՈՒԽ III

### Արասբարանների սզո ծխակարգը

Արասբարանների համար կենսական առաջնահերթ նշանակություն են ունեցել արտոտավայրերը, ուստի, խստագույնս արգելվել է դիակը հուղարկավորել արտոտավայրերի հարևանությամբ, որը հավասարագոր է եղել սրբապղծության: Հորիզոնական միգրացիայի ժամանակ ընդունված է հանգուցյալին երկզույն հագուստ հագցնել, որը խորհրդանշում է հարթավայրից լեռներ կամ հակառակ ուղղությամբ տեղաշարժը: Եթե ողբերգությունը տեղի է ունենում ուղղաձիգ միգրացիայի ժամանակ, ապա ընդունված կարգի համաձայն՝ ուղտ են մորթում և նրա ճարպը քսում հանգուցյալի մարմնին: Դա թույլ է տալիս հարազատներին եղանակային չոր պայմաններում փոքր-ինչ երկար պահել դիակը, որպեսզի այն չնեխի: Առաջին օրը դիակի կողքին անցկացնում են ամենամոտ հարազատներն ու տոհմի ավագանին, երկրորդ օրը՝ հեռավոր բարեկամները, երրորդ օրը՝ կանայք, չորրորդ օրը՝ ընկերները, իսկ հինգերորդ օրը սզո վրանի մուտքն ազատ է լինում բոլորի համար: Թաղման արարողությունները կատարվել են նախքան մայրամուտը, քանի որ համարվել է, որ արևի մայր մտնելուց հետո ցանկացած գործ կամ արարք որևէ իմաստ չունի: Արասբարանները միշտ մեծ հավատ են ունեցել ճակատագրի նկատմամբ: Ըստ նախկին պատկերացումների՝ մարդու մահվան օրը կանխորոշել է մեկ այլ, նոր մարդու ծնունդը: Երբ մոտեցել է մահվան օրը, հայտնվել է մահվան հրեշտակը և վերցրել նրա հոգին, որից հետո նա անշնչացել է: Այդ հրեշտակը Ջաբրահիլն է, որը գործել է իր ուղեկիցների՝ *այրուների*՝ սպասավորների հետ: Ըստ մուսուլմանական առասպելաբանության բոլոր հրեշտակներից վեր են կանգնած չորսը. նրանցից առաջինը Ջեբրահիլն է, որը Մուհամմեդին փոխանցեց Դուրանը, մյուսներն են Միքայլը, Իզրահիլը, Իսրաֆիլը, որոնց կերպարները փոխառված են հուդայական և քրիստոնեական առասպելաբանություններից:

#### *Իմամ      Հոսեյնի      հիշատակության      արարողությունները*

Արասբարանների համար մյուս կարևոր կրոնաձիսական արարողությունը, որը սզո արարողություն է համարվում, սուրբ Հոսեյնի մահվան հիշատակության օրերն են, որոնք նշվում են իրանական օրացույցով մոհարրամ ամսվա սկզբին (համընկնում է քրիստոնեական ամսաթվով՝ մայիսի վերջին): Այդ օրերին հոգևորականները, սովորաբար, շրջում են բնակավայրերում, հանդիպում և կրոնական թեմաներով գրուցում են մարդկանց հետ՝ քննարկելով, հատկապես, Հոսեյնի տառապալի մահվանն առնչվող իրադարձությունները: Խաջնարած ցեղերի որոշ ներկայացուցիչներ իրենց վրանների, իսկ երբեմն նաև նստակյաց կենսակերպ ունեցող որոշ իրանցիներ իրենց տների առջև դրոշ են գետնին ամրացնում՝ ի նշան սզո օրերի հարգանքի և հիշատակության: Դրոշը կոչում են «Հոսեյնի դրոշ», իսկ այն վրանը կամ տունը, որի առջև ամրացված է այն, կոչում են «մզկիթ», «սրբավայր»:

«Մզկիթի» վերածված վրանի կամ տան ավագ սերնդի արական սեռի ներկայացուցիչը պարտավոր է Հոսեյնի մահվան հիշատակությանը նվիրված

սզո յուրաքանչյուր օր մեկ ոչխար զոհաբերել և երեկոյան հրավիրել իր ազգականներին՝ ընթրելու: Սա կրոնական արարողակարգի մաս է կազմում, քանի որ ոչխարները զոհաբերվում են ի հիշատակ Հոսեյնի մահվան, նրա կրած տառապանքների և հանուն շիայական համայնքի լուսավոր ապագայի: Մատուցվող ընթրիքը «խարջ» (թարգմանաբար նշանակում է «ծախս») է կոչվում: Արասբարանի բնակավայրերով շրջող հոգևորականներն այդ օրերին երկու կամ երեք անգամ (առավոտյան, կեսօրին և երեկոյան) մուտք են գործում այդ «մզկիթները», աղոթք ասում և ռուզե<sup>1</sup> երգում, որի ընթացքում տվյալ ընտանիքի անդամները, սովորաբար, հեկեկալով ողբում են: Յուրաքանչյուր ընտանիքից մեկ կամ մի քանի տղամարդ սզո օրերի ընթացքում սև հագուստ են հագնում, բարձրանում որևէ բլրի վրա և մոտ երկու ժամ շղթայով հարվածում իրենք իրենց՝ ի նշան Հոսեյնի նկատմամբ անսահման սիրո և նվիրվածության: Այդպիսով նրանք փորձում են վերապրել այն տառապանքները, որ կրել է Հոսեյնը՝ հանուն հավատքի և շիայական համայնքի: Կանայք էլ դրոշի փայտի վրա պետք է փակցնեն երփներանգ գույներով կտորներ և ընթացքում ցանկություններ ու երազանքներ պահեն իրենց մտքում՝ խնդրելով Հոսեյնին ընթացիկ տարում իրականացնել այդ երազանքները: Նրանք չպետք է բարձրաձայնեն իրենց ցանկությունները, հակառակ դեպքում դրանք կարող են չիրականանալ: Բացի այդ, կանայք պարտավոր են սզո օրերի ընթացքում մոտենալ դրոշին, ձեռքով հպվել նրան և մտովի աղոթք ասել:

### **Եզրակացություններ**

Ուսումնասիրելով արասբարան ցեղի տոներն ու ընտանեկան ծիսակարգը կարելի է դրանցում նկատել բազմաթիվ առանձնահատկություններ, որոնք բնորոշ են բացառապես տվյալ էթնոկրոնական հանրային: Այդ առանձնահատկությունները պայմանավորված են գերազանցապես այն կենսակերպով, որին դարեր ի վեր հավատարիմ են եղել արասբարանները: Այդ կենսակերպը մեծապես կախված է նրանց բնակության վայրի աշխարհագրական դիրքից և ողջ բնաշխարհից, որի մանրամասները կարևոր են ցեղի ապրելակերպն ու բնորոշ բազմաթիվ հատկանիշներ ի հայտ բերելու համար: Ուսումնասիրությունը ցույց է տալիս արասբարան ցեղի առանձին անհատների վերաբերմունքն ու պարտավորությունները տոների ու ծեսերի նկատմամբ՝ դրանք կատարելիս, ինչպես նաև ընտանեկան սովորություններն ու ավանդույթները, որ բնորոշ են և ընդհանուր են ողջ ցեղի համար:

- Ընտանեկան ծիսակարգը պահպանելով և ազգային տոները նշելով՝ արասբարան ցեղի անդամները մերձենում են, համախմբվում են, իսկ դա անչափ կարևոր է քոչվոր անասնապահությամբ զբաղվողների համար, քանի որ

---

<sup>1</sup> «Ռուզե» սզո արարողությունների ժամանակ կատարվող հոգևոր երգ է, որի միջոցով պատմվում է շիա սրբերի կրած տանջանքների և մահվան հետ կապված դրվագների մասին՝ ստիպելով ներկա գտնվողներին արտասպել:



ամրապնդվում են ցեղի անդամների ազգակցական կապերը, լուծվում է փոխօգնության հարցը, և որ կարևոր է՝ պահպանում են սեփական դիմագիծը:

- Արաբարան ցեղի տոներն ու ընտանեկան ծիսակարգային համակարգը շերտավորված է եղել: Նրանց հոգևոր-մշակութային կյանքը, որպես իրանական ժողովրդի մշակութային համակարգի բաղկացուցիչ մաս, բոլոր ժամանակներում աչքի է ընկել իր հարստությամբ և բազմազանությամբ: Հարկավոր է ի նկատի ունենալ, որ նրանց ծիսակատարությունների բազմաթիվ տարրեր հուշում են այն մասին, որ դրանք ունեն հեթանոսական կամ զրադաշտական ծագում:

- Իրանական լեզուների բառագիտական վերլուծությունները, պատմագրական նյութերի ուսումնասիրությունն ու հնագիտական պեղումների արդյունքները վկայում են, որ քոչվոր անասնապահությունն արաբարան ցեղի համար հնագույն ժամանակներից ի վեր եղել է հիմնական զբաղմունք, կենսակերպ և գոյատևման միջոց:

- Արաբարանների քոչվոր կենսակերպը ապահովագրել է նրանց՝ այլ էթնոսների հետ ձուլման վտանգից: Այս առումով նպաստավոր են նաև նրանց ընտրած լեռնային դժվարանցանելի բնակավայրերը, որոնք պաշտպանել են թշնամիներից:

- Արաբարանում կան տոներ՝ նվիրված երեխաներին, քանի որ երեխաների տոներն էական նշանակություն ունեն երեխայի հոգևոր դաստիարակության գործում, հնարավորություն են տալիս երեխայի տարբեր հատկանիշները, ունակությունները բացահայտելու համար, քանի որ տոները, երբեմն, անցկացվում են մտավոր և ֆիզիկական մրցության տեսքով:

- Արաբարանում ամուսնության համար գործում են մի քանի սկզբունք: Ամուսնության ամրությունն ուղղակիորեն կապված է այն իրողության հետ, թե որքանով են բավարարվում ընտանիքի անդամների հուզական-հոգեկան և սեռական պահանջումները: Ընդ որում, վերջինս հետաքրքիր է այն առումով, որ սեռական շեղումները (առավել հաճախ տղամարդկանց) մի կողմից կարող են պայմանավորված լինել ամուսինների միջև սեռական փոխհարաբերությունների աններդաշնակությամբ, մյուս կողմից՝ կարող են լինել ամուսնական տարաձայնությունների հետևանք:

- Արաբարանները չամուսնանալը մեծագույն մեղք են համարում, ուստի ավագ սերնդի ներկայացուցիչներն ամեն կերպ փորձում են խրախուսել երիտասարդների ամուսնությունը:

- «Պարտադիր» ամուսնության ավանդույթը չունի իսլամական կրոնական ակունքներ, այլ ունի առավել հեռուն՝ մինչիսլամական ժամանակաշրջան գնացող արմատներ, թեև հետագայում շիայական գաղափարախոսությունը չի հակառակվել հեթանոսական այդ ավանդույթին:

- Ինչպես առհասարակ տոներն ու տարբեր ծիսակատարությունները, այնպես էլ սգո արարողություններն են կապված արաբարան ցեղի բնակավայրերի ու կենսակերպի հետ: Սրա վկայություններից է արտոսավայրերի հարևանությամբ հանգուցյալներին հուղարկավորելու

արգելքը: Սգո ծիսակարգ հստակ կանոնակարգված է: Թաղման ձևերը հնագույն ժամանակներից մինչև այժմ, ցույց են տալիս մարդկանց վերաբերմունքն ու պատկերացումները հանդերձյալ աշխարհի և հոգու շարունակական գոյության մասին: Հուղարկավորության ծեսի հետ կապված արարողությունները ցույց են տալիս, որ այն կապված է եղել արևի, ջրի, կենդանիների, թռչունների, հողի պաշտամունքների, հոգիների, ոգիների և հանդերձյալ կյանքի հավատի հետ:

• Սգո ծեսերի շարքն են դասվում սուրբ Հոսեյնի մահվան հիշատակության օրերը, որոնք նշվում են իրանական օրացույցով մոհարրամ ամսվա սկզբին (մայիսի վերջին): Հոգևորականները հանդիպում են բնակիչներին և հիշեցնում Հոսեյնի տառապալի մահը հանուն լուսավոր ապագայի:

### **Ատենախոսության թեմայով հեղինակի հրատարակած աշխատությունները**

- Ալաշիդ. Արասբարանի իլի բնակավայրը, «Orientalia», պրակ 12, Եր., 2011, էջ 138-141
- Արասբարանի հասարակական կառուցվածքը, «Orientalia», պրակ 13, Եր., 2011, էջ 188-192
- Տնայնագործական արտադրությունն Արասբարանի ցեղերի շրջանում, «Orientalia», պրակ 14, Եր., 2013, էջ 119-121
- Rahim Khan Chalabianloo Role in Suppression of Tribe Arasbaran: Constitutional Revolution in Iran, International Journal of Advanced Research in Management and Social Sciences, Vol. 1, No. 5, 2012, pp. 64-71
- Migration and Dwelling of Arasbaran Tribe in Iran, International Journal of Research on Humanities and Social Sciences – India, Vol. 4, No. 3, 2013
- Tribes of Arasbaran and Qaradaghis in Iran, American International Journal of Research in Humanities, Arts and Social Sciences, 2014, pp. 206-209
- The History and Social-Political Structure of Arasbaran Tribe (Qaradagh), International Research Journal of Humanities and Social Science, Vol. 6, No. 3, 2015

## Семейные ритуалы и праздники племени Арасбаран Резюме

Диссертация посвящена праздникам и семейным обрядам племени Арасбаран. В данной работе автор пытается раскрыть некоторые стороны образа жизни, психологии, культурных особенностей племени Арасбаран.

Праздник имеет синкретический характер и его следует рассматривать с разных точек зрения: экономической, религиозной и т. д. Целью данной работы является исследование праздников и семейных ритуалов кочевой племени арасбаранов, сравнивая их с традициями других иранских народов. Многие элементы позволяют предположить, что они являются, по большей части, старинными ритуалами и имеют зороастрийское или языческое происхождение.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка литературы и таблиц.

В введении представляется цель, проблемы, анализ, важность данной темы, ее актуальность, научная новизна, исторические источники, литература, связанная с данной проблемой. Важную роль играют различные материалы и ценные факты, собранные автором по современным праздникам и ритуалам племени арасбаран.

**В первой главе** дается географическое расположение Арасбарана, климатические условия, преистория племени арасбаран, происхождение названия местности, которая называется также Карадагом, кочевнический образ жизни, этнолингвистические и религиозные характеристики. Наименование "Арасбаран" имеет относительно новую историю. Его происхождение приписывается периоду прихода Пехлевийской династии к власти, то есть XX веку. До этого, в период монгольского владычества, поселение было известно как "Каредаг" или "Карадаг", слово тюркского происхождения и, как отмечает Хасанбейгин, изменилось под влиянием "Карабах", который находится на севере. Арасбараны исповедуют ислам-шииты-двунадесятники (признают своими духовными руководителями 12 имамов из рода Али ибн Абу Талиба).

**Вторая глава** посвящена племенным праздникам и брачным ритуалам арасбаранов. Первым представлен детский праздник Руз-е-Баччеха, который отмечается в середине апреля. В день праздника девочкам дарят *девочек-кукол*, а мальчикам – *мальчиков-кукол*.

Праздник *Эид-е Корбан* – праздник жертвоприношения. Во время праздника режут ягненка, и мясо жертвенного животного, обычно раздают в качестве милостыни нищим и бедным. Этот праздник отмечается на 10-ый день двенадцатого месяца мусульманского лунного года. Верующие обращаются с мольбой о покаянии к Богу, просят о прощении, здоровье, радости и благодарят.

*Чахаршамбе сури*-празднуется в последнюю среду года по иранскому календарю (по христианскому календарю-21-го марта). Название происходит от персидских слов: *чахаршамбе*-среда и *сур*-пир. Он имеет языческие корни, но шиитская традиция внесла кое-какие изменения: в частности, было объявлено, что

огни, которые люди зажигают на крышах своих домов, символизируют пламя полета Мухаммеда на крылатом Буреке.

Праздник Нового года *Ноуруз*- по христианскому календарю отмечается 21 марта (по персидски, نوروز - «Новый день»). Это- Новый год иранских народов, который празднуется в день весеннего равноденствия. Несмотря на то, что этот праздник не имеет ничего общего с исламскими обычаями, он наряду с Ираном, отмечается в Азербайджане, Афганистане, Пакистане и некоторых регионах Индии, а также у курдов. Происхождение этого праздника имеет древние корни. Официально его стали отмечать со времен Ахеменидов. Одним из обязательных действий праздника является крашение яиц и игр в разбивание яиц. Этот обычай похож на аналогичный обряд во время празднования Пасхи у христиан, который, к стати, тоже имеет дохристианские корни.

*Ялдан* у арасбаранов отмечается 21 декабря по Христианскому календарю. Этот праздник связан с культом языческого Митры, который почитался как божество солнца, небесного света и справедливости. Согласно преданию Митра (Михр) родился в ночь Ялдана. У армян в дохристианскую эпоху проводился праздник Мехекан (посвященный Михру) 25-го декабря.

*Свадебные обряды.* Одним из важнейших традиций арасбаранов является бракосочетание. Отказываться от брака (для мужчин) считается слабостью и даже-грехом. Девушки выходят замуж в 14-16 лет, а парни- в 16-18 лет. У арасбаранов принято заключать браки между родственниками-двоюродными братьями и сестрами. В ритуалы брака входят в основном выбор невесты, помолвка и обряд бракосочетания. Разводы очень редки.

**Третья глава** посвящена траурным обрядам. Каждый день после ухода человека из жизни имеет особое, определенное значение. В первый день усопший должен оставаться в кругу самых близких родственников-членов семьи и знатных членов рода. На второй день приходят дальние родственники, на третий день- женщины, на четвертый день покойного посещают друзья, а на пятый день вход палатки траура свободен для всех.

*Траурный обряд* в память о смерти святого Хусейна считается одним из важнейших обрядов арасбаранов. Он отмечается в начале месяца мохаррам по иранскому календарю (в конце мая по христианскому календарю). В этот день священнослужители посещают жителей и напоминают о мучительной смерти Хусейна ради светлого будущего людей.

В заключении отмечается, что семейные обряды и национальные праздники имеют большое значение и играют важную роль для арасбаранов, так как они объединяют членов всего племени, особенно имея ввиду то обстоятельство, что они занимаются кочевым скотоводством и часто нуждаются во взаимопомощи.

**Khojat Niknafs**  
**Family Rituals and Festivals of Arasbaran Tribe**  
**Summary**

The thesis is devoted to the holidays and family rituals of Arasbaran tribe. The author tries to investigate the psychology, the lifestyle, worldview and cultural features of Arasbarans.

Festival is syncretic in its nature and it should be considered from different points of view: economic, religious, etc. One of the questions of the work is to compare Arasbarans' festivals and rituals with other Iranian peoples (taking into consideration the nomadic way of life of Arasbarans). Another question is to show the origin of the rituals and the holidays: many elements of family traditions and rituals allow to assume that they are, mostly, old and have Zoroastrian or pagan origin.

The thesis consists of introduction, three chapters, the conclusion, the list of references and tables.

*Introduction* represents the purpose, problems, their detection, the analysis, importance of this subject, its relevance, scientific novelty, historical sources, different researches connected with the problems of the thesis and field materials collected now by the author.

*Chapter one* introduces the geographical arrangement of Arasbarans, climate, the origin of the name of their dwelling, Arasbarans' way of life based on nomadic life, their ethnolinguistic and religious characters. The Name "Arasbaran" has rather modern history. Its origin is attributed to Pahlavi dynasty period, that is the 20th century. Before that, during the Mongolian dominion, the settlement was known as "Ghareadagh" or "Kara Dag", the word of a Turkic origin and as Hasanbeygin mentions, was under the influence of "Gharebagh" or the name of the settlement "Karabakh" which is in the North. Arasbarans profess Islam "Twelver Shias", they recognize their heads 12 Imams from the kind of Ali ibn Abu Talib.

*Chapter two* is devoted to tribal festivals and mating rituals of Arasbaran. The first festival presented here is children's *Ruz-e-Bachchekha* which is celebrated in the middle of April. On the feast day the children are presented with dolls: it is necessary to give a *girl-doll* to the girl and a *boy-doll* to the boy.

*Eid-e Korban* is a sacrifice holiday. During the holiday a lamb must be cut, and the meat of the sacrificial animal is usually given away in charity as alms to beggars and the poor. This holiday is celebrated on the 10th day of the twelfth month of Muslim lunar year. Believers turn to God with a prayer of repentance, ask for forgiveness, health, joy and thank God.

*Chaharshambe suri* is celebrated on the last Wednesday of the year according to the Iranian calendar (on the 21 of March according to Christian calendar). The name of the feast comes from the Persian words: *chaharshambe*-Wednesday and *sura* -feast. It has pagan roots, but the Shiite tradition has made some changes: in particular it was announced that the fires which people burn on the roofs of their houses symbolize the flame of flight of Muhammad on his winged Boorak.

The holiday of the *New year* i.e. *Nouruz*-according to Christian calendar is celebrated on March 21 (in Persian, نوروز. "New day"). It is the first day of the year for the Iranian peoples which is celebrated on the day of the vernal equinox. In spite of the fact that this holiday has nothing in common with Islamic customs, it is celebrated along with Iran, in Azerbaijan, Afghanistan, Pakistan, and some regions of India, and also at Kurds. The origin of this holiday has ancient roots. Officially it began to be celebrated since the reign of Achaemenids. One of obligatory actions of this holiday is dyeing of eggs and games of breaking the eggs. This custom is similar to the ceremony during celebration of Easter among Christians. which, also has pre-Christian roots.

*Yaldan* is celebrated by Arasbarans on December 21 according to the Christian calendar. This holiday is connected with the pagan cult of Mitre who was esteemed as a deity of the sun, heavenly light and justice. According to the legend the god Mitre (Mihir) was born at Yaldan night. Armenians celebrated the holiday Mekhekan (devoted to Mihir) on December 25th in the pre-Christian era.

*Marriage rites.* One of the most important traditions of Arasbaran is marriage. To refuse marriage (for men) it is considered weakness and even - a sin. Girls marry in 14-16 years, and guys - in 16-18 years. Marriages between relatives- cousins are allowed among the tribes of Arasbaran. The ritual of marriage includes generally the choice of the bride, engagement and the ceremony of wedding. Stains are very rare.

*Chapter three. Mourning ceremonies.* When a person dies every day after his death gains a certain meaning. On the first day the deceased has to remain surrounded by the closest relatives- family members and honourable noble members of the tribe. On the second day distant relatives come, on the third day female relatives visit, on the fourth day the friends of the dead come, and on the fifth day the entrance of the tent of mourning is free for everybody.

The mourning ceremony in memory of *Saint Hussein's death* is considered one of the most important ceremonies of Arasbarans. It is marked out at the beginning of the month Moharram according to the Iranian calendar (at the end of May according to Christian calendar). On this day priests visit inhabitants and remind of painful death of Hussein for the sake of bright future of the people.

In the conclusion it is noted that family ceremonies and national holidays are of great importance and play an important role for arasbarans as they join together the members of the tribe, especially when considering the fact that they go in for nomadic cattle breeding and often need mutual aid.